

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:  
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բայի կերակի և տօն օրերէն):  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:  
Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

### ԲՈՎԱՆՊԱՎՈՒԹԻՒՆ

Մեր լրագիրները. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարմնամարզութեան կարևորութիւնը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեկարգական ազգային մեծ ժողովը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ. — ՊՍՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. ձանապարհորդական յիշողութիւններ Եվէ-դիայից:

### ՄԵՐ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ

I

Ի՞նչ է պատճառը, որ այն օրից, 1872 թվի յունվարի 1-ից, երբ «Մշակը» սկսեց հրատարակվել, մեր ուրիշ լրագիրներից ոչ մէկը չէր կարողացաւ մրցել նրա հետ: Պատճառներ շատ կան, բայց կը յիշենք այստեղ զիստաւոր երեք պատճառներ: Առաջինն այն է որ «Մշակի» լեզուն հասկանալի և պարզ է, իսկ մեր ուրիշ պարբերական հրատարակութիւններից ոչ մինը այնքան հասկանալի չէ ընթերցողների մեծամասնութեան համար: «Մշակը» այսպիսով խեղճաբար ստեղծեց իր մտքերի մէջ, ազատվեցաւ մի և նոյն ժամանակ և սպանիչ սխտաստիզմի դրօշմը կողմ և մեր անհասկանալի, զրարառի ձևերով կաշկանդված անկենդան լեզուից և ստեղծեց մի նոր, ինքնուրոյն, պարզ և հասկանալի աշխարհայէջք լեզու: Նրանք, որոնք չեն հասկանում այդ լեզուի աշողութեան գաղտնիքը, մանաւանդ մեր ուրիշ պարբերական հրատարակութիւնները, որոնք անկարող են այդ տեսակ լեզուով զբոյլ վրդովված վերաբերում մեր հասարակութեան մէջ մեր ստեղծած լեզուի ընդունելութեան պատճառը այն հանգամանքին, որ «Մշակը» զործ է ածում ուսուսական ոճեր և նախադասութիւնների դասաւորութիւն: Եւ ոչ

բայց այդ դատողութիւնը կատարելապէս սխալ է: Ասենք թէ մեր ինտելիգենցիան այն պատճառով աւելի հեշտութեամբ է հասկանում «Մշակի» լեզուն, քան թէ մեր միւս լրագիրների լեզուն, որովհետեւ մեր լեզուն իբր թէ լի է ուսուսական դարձուածներով. — բայց ի՞նչ է պատճառը որ «Մշակի» լեզուն անհամեմատ աւելի հեշտութեամբ են հասկանում քան թէ մեր միւս լրագիրների լեզուն, ոչ թէ միայն ուսուսական լեզուով մանկութիւնից կրթվող մեր ինտելիգենցիայի երկու սեռի ներկայացուցիչները, այլ և այնպիսի ընթերցողներ, որոնք մի խօսք անգամ ուսուսական չէր գիտէ, օրինակի համար այլ և այլ զիւզացիք, բանւորներ, արհեստավարներ: Ուսուսական երկու խօսք չիմացող աղուկեցին, դարբնացիներ, շուշուցիներ, արդուկեցիներ հեշտութեամբ հասկանում են «Մշակի» լեզուն, իսկ մեր միւս լրագիրներինը չեն հասկանում: Հօ, չէ՞ք կարող ասել որ նրանք մտնուութիւնից ուսուսական լեզուի վրա են կրթվել, բաժանորդակից քանի որ այդ դասուսական բաժանորդների մեծ մասը մի բառ անգամ ուսուսական չէր գիտէ:

Բայց սրանց բոլորի մասին կարելի է այն էլ ասել որ նրանք թէ էլ մի բառ անգամ ուսուսական չէր գիտէ, բայց ուսուսական լեզուի նրանց ակնաբայ քիչ թէ շատ ընտելացել է արդէն ուսուսաց բարբառին. լաւ, ընդունելի այս անհիմն պատճառն էլ... Բայց ի՞նչ կասէք որ պարսկաստանցի հայր, որ իր օրում ուսուսական լեզուի հնչունն անգամ չէ լսել, որ բացի հայերէնից և թուրքերէնից, կամ պարսկականաստանցի հայն էլ անհամեմատ աւելի հեշտութեամբ է հասկանում «Մշակի» հայերէնը, քան թէ մեր միւս լրագիրների լեզուն: Վերջապէս և թիւրքերէնից հայր, հօ, նոյնպէս ուսուսական չէր գիտէ, — բայց նա էլ աւելի հեշտութեամբ է հասկանում «Մշակը» քան թէ մեր միւս կովկասեան հայր լրագիրները, չէր նայել որ նրանց մէջ զանազան են, ի հարկէ, Շիրմանեանի պէս բազմաթիւ զարդակախօսներ, որոնք ծաղրում են «Մշակի» լեզուն: Բայց նոյն իսկ այդ զանազան Շիրմանեանները, մեր լեզուն ծաղրելով հանդերձ, մեծ յաջողակութեամբ կարգում, հասկանում և ըմբռնում են մեր գրած ամեն մի ստույգ հեշտ, հասկանալի, զիւրբըմբռնելի լեզու է, միայն ընդհանուր հայկական նախանձը կիրքը, կատաղութիւնը, չէ թոյլ տալիս նրանց հրատարակապէս խոստովանել ծրարութիւնը, խոստովանել որ «Մշակի» լեզուն ամեն հային աւելի հասկանալի է, քան թէ ժամանակակից որ և է այլ հայր լեզու:

Արեւին ի՞նչի մէջն է այդ երեւոյթի գաղտնիքը: Գաղտնիքը զրա մէջն է, որ «Մշակի» լեզուն ոչ ուսուսական է, ոչ Ֆրանսերէն է, ոչ գերմաներէն է, ոչ էլ սխտաստիական, մեռած հայերէն է, — այլ նոր հայերէն է, նախադասութիւնների ընդհանուր մարդկային աստուարութեամբ, ընդհանուր մարդկային ոճերով: Գրա մէջն է այդ լեզուի աշողութեան պատճառը, զրա մէջն է այն գաղտնիքը, որ ամեն մի հայ, որ քիչ թէ շատ հայերէն գիտէ, շատ հեշտութեամբ է հասկանում «Մշակը»:

նչպէս «Մշակի» մտքերը տան և չորս տարվայ ընթացքում ընդհանուր մարդկային մտքերն են եղել միայն: արտայայտված հայերէն լեզուով. — այնպէս է «Մշակի» լեզուն ուրիշ բան չէր, եթէ ոչ ընդհանուր մարդկային լեզուն, հայր բառերով արտայայտված: Ուշադրութեամբ դիտելով ներկայ դարում Եւրոպայում էլ կատարվող յեղափոխութիւնը այլ և այլ ազգերի զբաղմունքները կարողանալիք զարգացման մէջ, կը համոզվենք որ նոյն երևոյթը հետզհետեւ աւելի և աւելի նշմարվում է և քաղաքակիրթ աշխարհի բոլոր լեզուների զարգացման մէջ: Բոլոր լեզուները Եւրոպայում, չէր կորչեցնել իրանց հնչունների առանձնայատկութիւնները և լեզուի անհատական բնաւորութիւնը, հետզհետեւ մոտենում են միմեանց, սկսում են միմեանց նմանել իրանց ընդհանուր ձևերի, ոճերի, պարբերութիւնների դասաւորութեան կողմից: Օրինակ լրագրական լեզուն, մանաւանդ պարբերական մամուլի քաղաքական բաժինների լեզուն, այժմ ամբողջ Եւրոպայում միակերպ և միանման է դարձել բոլոր ազգերի լրագրութեան մէջ: Չեւրոպայում, դարձուածները, պարբերութիւնների, նախադասութիւնների դասաւորութիւնը կատարելապէս միանման են այժմ թէ զերմանական, թէ Ֆրանսիական, թէ իտալական, թէ սպանիական, թէ շվեդական և այլ ազգերի լրագիրներում, մանաւանդ լրագիրների քաղաքական բաժին և քաղաքական հեռագիրների լեզուն:

Երկրորդ պատճառը որ «Մշակի» հետ կովկասեան ոչ մի ուրիշ հայր լրագիր տարիների ընթացքում չէր կարողացաւ և այժմ էլ չէ կարող մրցել, այն է որ «Մշակը» առժամանակ մեր մէջ միակ առաջադեմ ժամանակակից լեզուն է, այն ինչ ուրիշները ուրիշ զեր չեն կարող յան-

զլխաւորապէս նրանք սովորում են կերակուրներ, տնային հասարակ ընկերներ ու դասագրան կերպի հացեր պատրաստելը: Ուսումնարանի բոլոր աշակերտները որ աշակերտութիւններ, որոնք թեով մօտ 200 են, ընդհանուր ճաշարանում են ուսում և խմում, ուր ամեն բան պատրաստվում է տնային ստեղծութիւններից, սեղանի մօտ էլ ծառայում են այս վերջինները: Ճաշարանը կրէ բաժանմունքից է բաղկացած: Առաջին բաժանմունքում ուտում են զլխաւորապէս ուսուցիչները և մի քանիսը հարուստ աշակերտներից, 20 ռուբլի վճարելով: Երկրորդ բաժանմունքում վճարում են 16 ռուբլի, և երրորդում 14 ռուբլի: Օրը կրէ անգամ ուտում են. — առաւօտեան ժամը 9-ին նախաճաշիկ կաթի ու սուրճի հետ, իսկ կէսօրին ճաշ երկու կամ երեք կերակուրներից բաղկացած և ճաշից յետոյ սուրճ: Երկրորդեան ընթրիք կաթի և թէյի հետ:

Ուսումնարանի այս բաժանմունքից վեց ամսում դուրս են գալիս փորձառու ստեղծութիւններ և տան մայրեր: Հայրապետական մասում սովորում են հասարակ և իտալական հաշվապահութիւնները: Արհեստաւորաց մասում արական սեռը սովորում է հիւսնութիւն, զիւր կազմել, քիցցներ գործել ու տախտակի վրա քանդակագործել: Իրական սեռը ամեն կերպ ձեռագործներ: Երեք տարում կարելի է բոլոր մասերը անցնել ու դասալ գործնական ուսումնարանի ուսուցիչ: Այդպիսի ուսումնարանները ուշադրութեան արժանի են:

Միտիոնարական ուսումնարանում պատրաստվում են երկտասարդներ և ուղարկվում Ամերիկա կամ ուրիշ երկրներ Ֆրիստոնի աւետարանը քարոզելու:

Կոյրերի գիշերօթիկ ուսումնարանում ընդունվում են ամեն հասակի մարդիկ երկու սեռից էլ և կարող են մնալ այնտեղ մինչև իրանց կեանքի վերջը: Սովորում են զբոյլ ու կարգալ Յետոյ պարսկական են նոյն ուսումնարանում մի որ

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՎ ԻՒՍՅԻՑ

Մի անձրեային առաւօտ ուղևորվեցի «Լիննէ» շոգենավով Լիֆլանդիայի Ռեգա քաղաքից դէպի Եվէդիա: Միւս օրը բացվեց մի հրաշալի, գեղեցիկ առաւօտ, որի նմանը ծովի վրա երբէք տեսած չէի: Ամպերը տեղ-տեղ բաժանված էին իրարից: Սրանց մէջ տեղում երևում էր գունատ լուսինը և արեւելեան կողմում էլ սկսում էր երկինքը գեղեցիկ կերպով կարմրել արեգակի բարձրացող ճառագայթներից: Գեղեցիկ էր առաւօտը. հանդարտ էր ծովը, ամեն տեղ տիրում էր լուրին լուսութիւնը, միայն շոգենավի անիւնների ձայնն էր, որ լսվում էր: Երբեքսուր սրբնթաց առաջ էր ընթանում և էր ետևից թողնում էր ծովային լայն ճանապարհը... Մի քանի ժամից յետոյ հիւսիսից երևում էր արդէն ցամաքը և ես աչքերս յառած միշտ նայում էի այն կողմը, որտեղից մի երկիր պիտի դուրս գար, որը բոլորովին անձնօթ էր ինձ: Այո, գիտէի, որ գտնվում է հեռու հիւսիսում մի երկիր, Եվէդիա անունով, և նրա մայրաքաղաքը Սոսկոյուն է, — ուրիշ ոչինչ: Երբեքսուր փոքր առաւօտեան կերպով երևում էր, որ ցամաքը բաղկացած է անթիւ բլուրներից, որոնք փոքր կղզիներ էին կազմում: Այս կղզիները բաժանվում էին միմեանցից մի գետի լայնութեան ջրով, որ երբեմն լայնանում էր ու երբեմն այնպէս նեղանում, որ կարծում ես թէ նաւը ափին պիտի կպչի: Նաւը գնում է այս անթիւ կղզիների միջով չորս ժամուկայ ճանապարհ, մինչև որ հասնում է Սոսկոյուն քաղաքը: Այս կղզիները ծածկված են մշտադալար ձառերով և այս ձառերի միջից երևում են տեղ փոքրիկ, գեղեցիկ,

նորը ճաշակով շինված երկաթեանի ամբարանոցներ և մի քանի տեղ էլ զիւղեր: Մի քանի այսպիսի բլուրների վրա ընկած է և Եվէդիայի մայրաքաղաքը իր հոյակապ շինութիւններով: Այնտեղ հասանք ժամը 3-ին կէսօրից յետոյ: Քաղաքի զիւրբ և քաղաքը չպար գեղեցիկ են. մանաւանդ նոր քաղաքը երևելի է իր լայն փողոցներով և գեղեցիկ շինութիւններով: Քաղաքի գեղեցիկութեանը շատ նպաստում են այգիները, պարկերը, հրապարակները ու մեծ քանակութեամբ արձանները: Այս արձանները զլխաւորապէս Եվէդիայի թագաւորներին են, որոնցից ամենից շատ աչքի է ընկնում պապական պատրան առջև գտնված այգում կարողաւ XII-ի մեծ արձանը: Սա բաւած ունի իր աջ ձեռքում սուրբ ձախ ձեռքով մասնացրց է անում դէպի Ռուսաստան: Ուրիշ արձաններից ամենից շատ աչքի է ընկնում, իր սիրելի բուսականութեան մէջ թաղված երևելի բնագետ Լիննէի ոսկեղօծ արձանը, որ մի տարի է միայն կանգնեցրած է: Սրան շրջապատել են իր սիրելի բուսականները և շենչաւորները: Բուսական թագաւորութեան այս աստեղծութեամբ բաւած ունի իր ձեռքում մի քանի ծաղիկներ և խոտեր ու սիրալիլ աչքերով նայում է նրանց վրա. կարծես այդ աչքերի համար չը կար ոչինչ այնքան մօտ և այնքան քաղցր ինչքան այս ծաղիկներն ու խոտերը: Ընդհանրապէս վեր առած, քաղաքը շատ գեղեցիկ է: Սոսկոյունը ունի 250 հազար բնակիչներ. կարելի է ասել սրանք բոլորն էլ շվեդացիներ են, ինչպէս և ամբողջ Եվէդիայում: Սա է պատճառը, որ երբ մի օտարական գալիս է այստեղ, իսկոյն լրագիրները սկսում են նրա մասին զբոյլ և միջը միւսից արտատպելով, հերթը հասնում է մինչև ամենափոքր դասաւորական թերթին, և վերջապէս այնպիսի նոր բաներ և կարգում քո մասին լրագիրներում, որ ինքը էլ դարմանում ես: Յանկարծ կարող ես, որ դու եկել ևս Եվէդիա բնակարան տանելու կովկաս և մի շատ մեծ գործարան բա-

նայու այնտեղ: Այժմ ստանում ես ամեն օր նամակներ, նամակ նամակի ետևից, դանազան արհեստավարներից ու բանուորներից, որոնք ցանկութիւն են յայտնում հետեւի քեզ դէպի կովկաս ու խոստանում են շատ լաւ ծառայել և Եվէդիայի բանուորի անունը հռչակել: Այ թէ միայն բանուորը, այլ ներկարարն էլ վստահանում է քեզ նամակ զբոյլ ու առաջարկելու, որ դու նրան տանես քեզ հետ կովկաս քո գործարանը ներկելու: Սրա պատճառը այն չէ, որ շվեդացի բանուորները չբաւոր են, կամ թէ ապրուստի միջոց չունեն. ոչ այլ նրանք կամենում են իրանց բաղադր փորձել ուրիշ երկրներում: Նրանք տեսնում են որ Եվէդիայում իրանց մեծ ապագայ չէ սպասում և հազարներով գնում են Ամերիկա և ուրիշ երկրներ քաղցր որոնելու:

Երեք օր մնալով Սոսկոյունում, ճանապարհեցի դէպի Ֆրիստիէնեան քաղաքը: Սա մի փոքրիկ քաղաք է 5 հազար բնակչով: Տները մեծ ու գեղեցիկ են, փողոցները լայն, ինչպէս Եվէդիայի համարեա բոլոր քաղաքներում:

Ֆրիստիէնեանում կան բայի ուրիշ սովորական ուսումնարաններից, դ ո ը ն ա կ ա ն, մ ի ս ի օ ն ա ը ր ա կ ա ն և կ յ յ ը բ ի ու ս ու ս մ ն ար ան ն ր: Գործնական ուսումնարանը երկու սեռի համար է, և այստեղ աշակերտներ ու աշակերտուհիներ ընդունվում են 14 տարեկան հասակից մինչև 45: Սա բաղկանում է զանազան մասերից, — ընդհանուր լեզուաբանական, գիւղատնտեսական, տնային ցնտեսական, հաշվապահական և արհեստաւորաց: Ընդհանուր մասում սովորցնում են կարգալ, գրել, աշխարհագրութիւն, պատմութիւն, մաթեմատիկա և այլն: Լեզուաբանական մասում անցնում են շվեդերէն, անգլիերէն, ֆրանսերէն և գերմաներէն: Գիւղատնտեսական մասում, — սրան պատկանող մի քանի առարկաներ, ի միջի այլոց քիմիայի տարրական ուսումը և տարբաւորութիւնը: Տնային տնտեսութեան մասում ընդունվում են միմիայն իգական սեռից: Այստեղ

ձրն առնել բացի պահպանողական (?) զերից: Վերջապէս «Մշակի» աջողութեան կրորդ պատճառն այն է, որ նրա ուղղութիւնը դրական է, այն ինչ միւս հայոց պարբերական հրատարակութիւններին բացասական է:

Այդ երկու կէտերը, և նոյնպէս առաջադէմ և դրական բառերի իմաստը ներկայ յօդուածը չընկրկացնելու համար ստիպւած կը լինենք բացատրել մեր լրագրի հետեւեալ առաջնորդները մինուէ:

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ՄԱՐՄԱՐԱՐՁՈՒԹԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ**

Մարմնամարզութեան օգտակարութիւնը ապացուցված է նա գործադրում է այս կամ այն ձևով նոյն իսկ մեզանում, սակայն սահմանափակ կերպով: Մարմնամարզական ընկերութիւնները մեծ ծառայութիւն են մատուցանում և մեծ հոշակ ունեն թէ Եւրոպայի և թէ նոյն իսկ Ռուսաստանի շատ քաղաքներում: Այդպիսի մի ընկերութիւնն է Եւրոպայի անհրաժեշտ է երևում և մեզ համար, գէթ նա այժմ թիֆլիսի համար:

Այժման մեր երիտասարդութիւնը, ընդհանրապէս առած, առաջվայ երիտասարդութիւնից բաւականին թույլ է իր կազմակերպչական հանրապէս ապացուցված ճշմարտութիւն է նա ինքը տեղեակ է այս ճշմարտութեան, բայց համարեալ այ մի արհեստական միջոցի չէ դիմում կազմակերպչական, ամբանալու համար: Այժման մեր երիտասարդութիւնը բաւականապէս է այն դրութիւնում, այն պայմաններով որոնց նա ենթարկւած է Ռուսում շահարտած ուսանողը մտնում է կեանքի մէջ և անդադար ու միանալ աշխատանքի մէջ բթանում, թուլանում է: Ռուսում աւարտածները, պայտօն ստացածները, դիրք ձեռք բերածները՝ գրվում են մեծ մասամբ այս կամ այն կըլուքի անդամ և ազատ ժամանակը այցելում այդ կըլուքները, մեծ մասամբ կամ թուղթ խաղալու կամ պարելու համար: Առաջինը, եթէ նա երկար է տեսում, կատարելապէս հակառակողական է, իսկ երկրորդն ըրող երիտասարդները չեն դիմում, իսկ դիմողները չափազանցութեան են հասցնում: Շատ ցակաւորութիւն են ձի հեծողները, թիֆլիսը խաղաղոցները, վերջինս նստողները, լիպիցոցները: Այս կամ ուրիշ առողջարար, կազմակերպչական, զլխաւորապէս քննադատութեամբ: Դիմում բաները դուրս են բերվում աստիճանները և վաճառվում: Այդպիսով կոյրերը հակառակ ջրախնայող իրանց հայր ուսում են և հարկաւորութիւնը չունեն փողոցները ընկնելու և հաց մուրալու:

Երկու ամիս ֆրիստինէսմանում մնալով ճանապարհակցի վերջնական լինել (գաւառը), որ յայտնի է ամբողջ Եւրոպայում իր գեղեցիկ բնութիւնով: Երբ քաղաքի եւ Կարմիր ծաղաքը, որ 12 հարկար բնակիչ ունի ինչ կամենայի էլ ուրիշ բաների մասին խօսելու, այնու ամենայնիւ պէտք է անեն, որ ամենից շատ աչքի ընկնող ամեն մի քաղաքում ուսումնարաններն են, մասնաւոր մասնազիտականները, որոնցից համարեալ ամեն մի քաղաքում մի քանիսը կան:

Այս գեղեցիկ բնականութեան քաղաքում որ մասնազիտական ուսումնարանը աւելի սաղ կը գար քան թէ այդպիսի քաղաքը, և դրանով էլ յայտնի է Կարմիր ծաղաքի, թէպէտ և ունի և ուրիշ գործնական դպրոցներ: Կարողութեամբ և առհասարակ ամբողջ Եւրոպայում յայտնի են նմանապէս և Եւրոպայի և Կարմիր ծաղաքի ամեն մի մարզիկ որոնք ցերեկով իրանց աշխատանքով են պարապված: Երեկոները կարողանում են այստեղ նովորել խաղաղական հաշտակութիւն, մաթեմատիկայի բոլոր ճիւղերը, նկարչութիւն և դանազան արհեստներ՝ քանդակագործութիւն, ներկարարութիւն և այլն: Մի քանի օր այստեղ մնալով ճանապարհվելի նոյն գեղեցիկ վերջնական շրջանը քաղաքը: Զննարիտ որ ընտրվում այստեղ գեղեցիկ է տարվալ ամեն ժամանակում: Երկրորդը մաթեմատիկայի անունը նստած դուրս ևս նայում և տեսնում են գեղեցիկ կանաչ անտառներ, փողոցիկ անոթներ, գետեր և լճեր՝ զմայլած նայում են այն բոլորին և զանազան հանձնելի զգացմունքներ ներսում են: Գեղ: Այն չորեկաւորը չվաճառում է և կանգնում կայարանի առջև: Վազօնի դուռը բացում են և ցուրտը ներս է գալիս:

Չորիչ զուարճութիւններին դիմողները կազմում են մի աննշան մաս թիֆլիսի երիտասարդութիւնից և այդ թւի մէջ լինում են և պատահականները: Ուզում են ասել որ կանոնաւոր բան չը կայ, որ դա պահանջ չէ դարձել: Օրիորդների դրութիւնը այդ կողմից աւելի անմխիթար է: Ինչ հասակի, ինչ դասակարգի որ պատկանում լինի նա, կամ նստողական կեանք է վարում, շատ շատ օրը մի երկու անգամ դուրս է գալիս այն էլ մի քր և ից զործի համար: Եւ դա այն օրիորդների դրութիւնն է, որոնք մայրեր պիտի դառնան:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով անկարելի է չը ցանկանալ որ թիֆլիսում շուտով կազմվի մի պարզ մարմնամարզական ընկերութիւն, որի տալիք օգուտը ակնհեր և անհերքելի է:

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

ԹԵՄԻՐԻԱՆ-ՇՈՒՐԱՅԻՑ մեղ գրում են, «Այսօր, հոկտեմբերի 4-ին, ժամի 12-ին (կէսօրին), զգալի եղաւ մեղ մայր երկրաշարժ, որ տևեց 5 րոպէ: Մարդիկ սկսեցին փախչել իրանց խանութները և տները զէպի փողոց: Բազմաթիւ պատկերաշարժը սաստիկ չէր և ոչինչ վնաս չը հասցրեց քաղաքին»:

ՂՈՒՐԱՅԻՑ գրում են մեր լրագրին հետեւելով: «Ներքեալ սկստեմբեր ամսի 28-ին, երեկոյեան ժամի 12-ից մինչև առաւօտեան 6 ժամ այստեղ սաստիկ ձիւն եկաւ, այնպէս որ ընկած ձիւնի բարձրութիւնը հասնում էր մի արիւնի: Չիւնի սաստիկ գալը և հողմի փչելը վնասեց տանձերի և խնձորների հասնելուն: Բացի սրանից գիւղացիք պատմում են, որ մրգերով բեռնաւորված պտղատու ամբողջ ծառեր ցրտից ձեղքվեցան: Այս տարի Ղուրայի գաւառից բաւական մեծ քանակութեամբ չորացրած տանձ են արտահանել զէպի Ատրախան վաճառելու: Մեծ քանակութեամբ չորացրած տանձ առնողները տեղացի թուրքերն են, որոնք այդ բերքը առնում են ապառիկ և Ատրախան հասցնելով սկսում են այնտեղ ծախել պակաս գներով: Տեղա առնում են պուրը 80 կօպէկով, մինչև Ատրախան արտահանելը նրանց վրա նշատում է 1 րուբլի և 10 կամ 15 կօպէկ, իսկ ինչպէս հաստատ աղբիւրից իմացանք, այդ թուրքերը վաճառում են Ատրախանում նոյն տանձի պուրը 1 րուբլիով, կամ 1 ր. 10 կօպ: Այս տարի

Ղուրայից չորացրած տանձի արտահանած քանակութիւնը հասնում է 70,000 պուրի: Մեղ գրում են ՂՈՒՐԱՅԻՑ հոկտեմբերի 8-ից, որ այժմ այդ քաղաքում կենսական պիտոյքները սկսել են թանկանալ: ցորենի պուրը 50 կօպէկ արժէ, գարին 30 կօպ, կորեկը 20 կօպ, լաւ բրինձը 1 ր. 60 կ., ոչխարի մսի ֆունտը 7 կ., տաւարինը 6 կ., կարագ իւղի ֆունտը 20 կօպէկ: Թղթակիցն աւելացնում է որ տորոնի և ցորենի գները բարձրանալով՝ տեղական առևտուրը սկսեց լաւանալ:

Շատ անգամ լսվում են զանազաններ թէ բժշկները խղճմամբով չեն վերաբերվում զէպի հիւանդները, թէ բժշկները աղքատ հիւանդներին չեն այցելում և մինչև անգամ իրանց տան մէջ էլ չեն ընդունում, որովհետև աղքատներից շատ չունեն, այն ինչ աւելի ուրախութեամբ գնում են հարուստների տները, որովհետև հարուստ հիւանդներից մեծ շահ ունեն: Ընդհանրապէս այդ տեսակ զանգատներ պէտք է որ արգարացի լինեն, ոչ թէ միայն մեր երկրի բժշկների վերաբերմամբ, բայց և երկի ամբողջ Ռուսաստանի, որովհետև մայրաքաղաքների լրագրիներում պատահում է մեղ կարգալ նոյնանման զանգատներ: Նորբուն այդ տեսակ զանգատներ բժշկների դէմ մեղ պատահեց կարգալ «Петербургский ЛичеТорЪ» լրագրում, որ բացի սրանից հաղորդում է և այն լուրը, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված բժշկական օրէնսդրութեան վերաբնութեան անհրաժեշտութեան մասին և որ կառավարութեան ենթարկել բժշկներին այն զէպում, երբ նրանք կը մերժեն այցելել հիւանդին անմիջապէս նրա առաջին պահանջման: Սրա հետ ենթադրութիւն կայ, լրագրի ասելով հարց յարուցանել և բժշկների վարձատրութեան քանակութեան մասին իրանց ցոյց տուած բժշկական օգնութեան համար:

Գարձեալ յիշեցնում ենք մեր գաւառական և առհասարակ դրսի թղթակիցներին և աշխատակիցներին, որ մենք վերադարձնում ենք միմիայն հիմնաւոր թէ ինքնուրոյն և թէ թարգմանական յօդուածներ, բայց ոչ թէ մի քանի երեսից բաղկացած փոքրիկ թղթակցութիւններ:

Ֆրանսիացի երեկելի գիտնական Պաստորի մեծութեան է և նոյնպէս պատին կպցրած պիտի լինի, ինչպէս այս վերջինը. սա շինած էր չորս տեսակ ցիգարների համար՝ շվեդացի փողով հինգ, վեց, ութ և տասը էօրէ արժողութեան: Այս չորս տեսակի ցիգարներով նախ և առաջ 1904-ում է արկղը և կողպվում, ամեն մի տեսակի համար կայ մի առանձին նեղ բացվածք փողը գցելու համար և այս բացվածքների ամեն մէկի տակ գինը գրած է: Եթէ գցում են իր տեղը մի հատ հինգ էօրէանոց և արկղը առաջում ամբողջած փայտի կտորը շարժում, ապա ստանում են մի ցիգար ցած տեսակից: Եթէ միւս տեղը հինգ էօրէանոց են գրցում, ինչքան աշխատում են արկղը բեղ ցիգար չէ տալիս մինչև որ մեկ էօրէ էլ չեն գցում: Ութ էօրանոց ցիգարի տեղը գցում են մի տասէօրէանոց փողը ստանում են մի ցիգար և երկու էօրէ յետ: Սրանից պիտի շուտով մեծ քանակութեամբ Ստոկհոլմում պատրաստվէր: Պատենտ էր վերցրած 15 տարով մի քանի երկրներում: Առաջի տարին մէկը արժէր մեր փողով 55 րուբլի: Պ. Կոստերը բերքը առաջարկում էր ինձ մէկը բերել հետս կովկաս, բայց նա չը բերեցի, որովհետև հարկաւոր էր ռուսաց փողը համար յարմարեցրած լինէր: Այդ մի շատ յարմար մեքենայ է. կարելի է փողոցում պատին կպցնել և ցիգար վաճառել: Հարկաւոր է նկատել, որ երբ որ և ից տեսակի ցիգարը վերջացած է լինում և դու փող են գրցում այնտեղ, մեքենան զանգակ է լսվում, նոյնը անում է երբ դրամը կեղծ է լինում: Եօրէքրոպից գնացի կրկին Ստոկհոլմ: Քրիստիանիան եղած ժամանակ, ես մի նամակ էի ստացել Ստոկհոլմից հայերէն լեզուով, որ ինձ շատ ուրախացրել էր: Պ. Նորայր Բիւրաւորացին էր գրել այդ նամակը: Իմ մասին լրագրիներում կարգալով, գրել էր և ինչպէս ինձ, եթէ կրկին Ստոկհոլմ գնալու լինեմ, իրան այցելեմ: Ես ուրախութեամբ այցելեցի հայ ազգակցին, երբ այնտեղ եկայ: Նրա կինը շվեդացի պատկերահան է: Շատ սիրով և ուրախութեամբ ընդունվեցի ես: Նորայրը, իր ասելով, ե-

թօղը կատարած չնելի դէմ, սկսում է գործադրվել և Ռուսաստանում Օրէսսայում բժշկ Գամալէյ, Պաստորի աշակերտը, բացեց մի կայարան Պաստորի մեթօդով, այն է կատարած շան թոյնը մարդկանց պատուաստելով, ջրվախութիւնից բժշկելու: Այս օրերս Օրէսսայից վերադարձան թիֆլիս պ. Սուդանաճեան, օֆիցէր Յօրիցկի և իր ծառան, որոնց մի ամիս առաջ թիֆլիսում կծել էր կատարած շունը և որոնք Օրէսսա գնալով, այնտեղ տաս օր մնացին, բժշկվելով բժշկ Գամալէյի մօտ Պաստորի մեթօդով: Ասում են որ պարոնները կատարելապէս բժշկվեցան:

ՍՂՆԱԻՑ մեղ գրում են, որ սեպտեմբերի 21-ին բացվեցան Սղնախի հայոց երկսեռ ուսումնարանները: Բացման հանդիսին ներկայ էին բազմաթիւ հիւրեր՝ մարդիկ և կանաչը, ներկայ էր և գաւառագետի օգնական պ. Հազարապետեան, որ մի և նոյն ժամանակ և ուսումնարանների հոգաբարձու է: Պատարալից յետոյ, որին ներկայ էին անիկները իրանց ուսուցիչներով, ուսումնարանի նախագահ հայր Տէր-Ստեփանը բացեց հանդէսը մի ճառով, որի մէջ բացատրեց ուսման կարևորութիւնը և կանոնադրութեան այն մասը, որ վերաբերում է աշակերտների ընդունելութեանը: Աշակերտների ընդունելութիւնը, մեր թղթակցի ասելով կը շատանալի մինչև հոկտեմբերի 15-ը: Հոգաբարձութիւնը, որ բացի մէկից, ամբողջութեամբ բաղկացած է համալսարանական անձեկից, աշխատում է վերանորոգել ուսումնարանների խարխուլ շինութիւնը:

Թիֆլիսում հրատարակվող «Тифлисский ЛичеТорЪ» թերթը լսում է որ մի պարոն դիտաւորութիւն ունի եկող տարվայ յունվար ամիսը ձեռնարկել թիֆլիսում թատրոնական մի թերթի հրատարակութեան, հայերէն լեզուով, «Յուշարար» անունով:

«Մշակի» բաժանորդագրութիւնը շարունակվում է: Երեք ամսով, այսինքն մինչև յունվարի մէկը գրվելու համար՝ պէտք է վճարել 3 րուբլի:

Կրկնակի, 18-ին հոկտեմբերի բացվելու է «Թիֆլիսի» ՍՂՆԱԻՑ պ. Բաշինջաղեանի պատկերահանդէսը: Երեւանեան հրապարակի վրա, «Կովկաս» հիւրանոցի տակ: Պատկերահանդէսը բայց կը լինի առաւօտեան 9 ժամից մինչև 4 կէսօրից յետոյ: Պ. Բաշինջաղեան ի թիւս այլ մեծ և փոքր պատ-

րեք տարի էր, որ Ստոկհոլմում էր բնակվում, բայց չվեզերէն լեզուն դու չէր սովորել, որովհետև իր ամուսնու հետ միշտ Ֆրանսերէն է խօսում: Նա ունէր այնտեղ մեծ թուղ ֆրանսերէնից հայերէն բառարան, որ չէր վաճառված: Տպագրութեան համար պատրաստվում էր հայերէնից ֆրանսերէնը:

Մամուլը շատ առաջացած է Եւրոպայում ֆրիստինէսման պէս փոքր քաղաքում չորս հատ թերթեր էին հրատարակվում և բոլորը կարողանում էին իրանց գոյութիւնը պահպանել: Ստոկհոլմի ամենամեծ թերթերը արժէին հատը 3 կամ 4 կօպ. ուսաց փողով: Ամբողջ ժողովուրդը, թէ քաղաքացին և թէ դուղացին, լրագրի է կարդում: Այստեղ ուսումը մինչև տասնչորս տարեկան հասակը տարտաւորեցուցի է: Երեկոյեան էլ իրանք մեծ ուրախութեամբ գնում են ուսումնարան: Առաջին տարին արդէն սկսում են երեխաների հետ բնական պատմութիւնը: Նրանք ուսումնարանից վերադառնում են տուն, ճաշում, երկաթի թերթից շինած բուսամանները վերցնում և գնում դաշտերը և անտառները ծաղիկներ և խոտեր ժողովելու: Գալիս են տուն, կրկին գործ ունեն կատարելու, ժողովածները պիտի չորացնեն...:

Եվեղեան առհասարակ շատ բաւ տղապետութիւն թողեց: Ես չէի կարծում, որ հեռու հիւսիսում ընկած մի երկրի կարող է այսքան գեղեցիկ լինել: Մասնաւոր կլիման այստեղ շատ մեղմ է, ջուրը շատ լաւ, այնպէս որ մի կովկասցի կարող է այստեղ ապրել, ինչքան ժամանակ որ կամենայ և կլիման նրա վրա ոչինչ վատ ազդեցութիւն չի ունենայ: Երկիրը ընդհանրապէս շատ գեղեցիկ է: Եվեղեանները շատ սիրալիր, հիւրասէր, հետաքրքիր և ուրախ մարդիկ են: Մասնաւոր վերականգնող, որտեղ ինչպէս բնութիւնն է գեղեցիկ և ուրախ, այնպէս էլ այստեղի ժողովուրդը միշտ ուրախ և ծիծաղալ է: Եվեղեան լաւ երկիր է, չվեզացին շատ լաւ ընկեր է: Ստոկհոլմ. Պ. Բաւալայեանց

կերպերը հանդէս կը դնէ իր մի նոր մեծագործ պատկերը (երկարութիւնը 3 արշին և բարձրութիւնը երկու արշին) Հայերի գաղթականութիւնը Պարսկաստանից դէպի Կովկաս, Լազարեան տոհմի առաջնորդութեամբ 28 թակահինս: Յոյս ունենալով որ ժողովուրդը տաղանդաւոր երիտասարդ ներկարչի այդ պատկերահանդէսը կը պատուէ իր այցելութեամբ, քաջաբերով նրա ոյժերը: Պատկերահանդէսը շարունակվելու է երկու շաբաթ:

Մեզ գրում են ՇՈՒԱՎԵՐԻՑ հետեւեալը: Հաղի մեր գիւղական ժողովը սկսել է մտածել մի քանի խելօք հարցերի մասին ուսումնարանի օգտին: Այս ձգտման մէջ չէ կարելի մեր գիւղացիներին չը գովել, միայն չտ ախտոս որ մեր մէջ էլ կան այնպիսի անձինք, որոնք իրանց կօպէկէ համար կամենում են ամեն բան քանդել, ոչնչացնել, ինչպէս մի քանի տաւարատէրեր, աչքի առաջ ունենալով որ գիւղական ժողովը վճուել է 1) այն մարդիկ, որոնք, բացի լծկան եզնիցից, ունեն և ուրիշ շատ չարքամանի կենդանիներ, որոնք արածում են ընդհանուր արօտատեղիներում, նրանք պիտի իւրաքանչիւր տարի մի որոշ գումար վճարեն ուսումնարանին: 2) նաև ի կապալառուս պիտի վառի փողոցի բոլոր կապտերները և վճարի յօգուտ ուսումնարանի 200 բուրլի տարեկան և 3) երկու թաղի հրապարակական մեծ կլիւնները տէրերը յօգուտ ուսումնարանի պիտի վճարեն տարեկան 180 բուրլի:

Շուրաւիք գիւղում, ինչպէս մեզ գրում են, մտել է մի գովելի սովորութիւն. մեռելահացի (քեղեխ) սեղ աշտմ շուրաւիքից սկսեցին իրանց նիւթական կարողութեան համարմտ իրանց ննջեցեալի հոգ և համար, ուսումնարանի օգտին կտակել 15 բուրլուց սկսած մինչև 200 բուրլ: Այդ գովելի գործում, ինչպէս թղթակիցը հաղորդում է, առաջին օրինակը ցոյց տուեց հանգուցեալ Աւետիք Նիբեգեան, որ մեռնելուց առաջ ուսումնարանի օգտին կտակեց 200 բուրլի, իսկ երկրորդը Կիլիկի Գեօրգի Միրաբեան է, որ 100 բուրլի նուերեց ուսումնարանին:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԲՈՂԱՐԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՄԵՍ ԺՈՂՈՎՐ**

Բոլզարայի շուրջը թնդացող քաղաքական փոթորիկները իրանց ուղղութիւնը դարձնում են դէպի մի կողմ. գլխաւոր խնդիրը նրանումն է արդէն, թէ ո՞վ, ինչ մարդ, և ո՞ր պետութեան թիկնածուն կը լինի Սօֆիայի գահի սպազայ ժառանգը: Անցան նախկին բազմածև յուզմունքները և այժմ նոր իշխանի ընտրութեան և անձնաւորութեան մէջն է կայանում բոլոր գաղտնիքը... Այդ գաղտնիքը կարող է, ի նախին, նորաշրջ և աւելի ուժեղին փոթորիկներ հասել բերելու այդ կարող է և այնպէս լինել, որ բոլզարական խնդիրը մի առ ժամանակ խաղաղութեան մէջ կը մտնի: Հոկտեմբերի 15-ին, մի քանի օրից յետոյ, հաւանական է, որ կը գումարով ազգային մեծ ժողովը: Ընտրութիւնները արդէն եղել են: Այս, ընտրութիւնները եղել են և ուշադրութեան արժանի վախճան են ունեցել: Սօֆիայից, սեպտեմբերի 30-ից մեզ ուղարկած հեռագիրը հետեւեալ տեղեկութիւններն է տալիս ազգային մեծ ժողովը պատգամաւորների ընտրութեան մասին: 590 պատգամաւորների ընտրված են 420 խնամակալութեան կողմնակիցներ, 20 Յանկովի կողմնակիցներ (յայտնի է, որ Յանկով Ռուսաստանի կողմնակից է) և 50 էլ անորոշ քաղաքականութեան պատկանողներ: Որ կուսակցութեան կողմն էլ անցնեն այդ յիսուն պատգամաւորները, ինչ տեսակ կուսակցութեան պատկանող է որ լինեն նրանք, դրանք պէտք է լրացնեն ամբողջ թիւը.—այժմեանից արդէն պարզ է, որ կառավարչական կուսակցութիւնը մեծամասնութեան կողմից յաղթութիւնը տարել է: Եթէ մինչև իսկ միանան Յանկովի կուսակիցները՝ միւս յիսուն պատգամաւորներն էլ, եթէ նոյն իսկ դրանց կողմնակից լինեն և նրանք, որոնք պէտք է ընտրվեն, այնու ամենայնիւ դրանք բոլորը միասին, հազիւ կառավարութեան կուսակիցները կորրորդ մասը կը կազմեն: Եւ այդ բանը ուշադրութեան արժանի է ազգային ժողովի անկլիցների վերաբերութեամբ: Չարմամալը չէ ուրեմն որ ազգային ժողովը գործունէութեան վրա են դարձնում բոլորը իրանց ուշադրութիւնը: Ազգային մեծ ժողովը

պէտք է ընտրի Բոլզարայի իշխանին, որի անձնաւորութեան մէջ է կայանում մօտիկ ապագայի դրութեան հիմքը: Օտար պետութիւնները դեռ բաւականանում են միայն հանդիսատես լինելով, և զէթ արտաքուստ, հեռուց են յայտնում իրանց արամադրութիւնը: Ռուսաստանը յայտնեց արդէն պարզապէս, որ ինքը չէ ընդունում ազգային ժողովի ընտրութիւնները, և ուրեմն, եթէ ազգային ժողովը կարող կը լինի իրան ցանկալի մի ընտրութիւն անել, այդ ընտրութիւնը ևս չի ընդունի Ռուսաստանը: Գեներալ Կառլաբարտ արդէն ճանապարհորդեց Բոլզարայի նշանաւոր կողմերը. Վարնա, Շուրաւ, Բուշուլու: Հակառակ Ռուսաստանի ցանկութեան բոլզարական կառավարութիւնը չը կամեցաւ յետաձգել ընտրութիւնները: Ռուսաց պաշտօնական մամուլը, հիմնված ուսաց կառավարութեան Բոլզարայի գործակալների տուած անդեկութիւնների վրա, պիտու է որ ընտրութիւնները եղել են ճշման և արարաբի ազդեցութեան տակ:

Բոլզարական կառավարութիւնը խիստ կերպով յայտնեց, որ օտարները ոչ մի իրաւունք չունեն խառնվելու ընտրութիւնների մէջ, և խառնվողները կարողաւթեն Բոլզարայից: Պատերազմական միջնարարութիւնը խիստ նկատողութիւն արեց անհնազանդութիւն ցոյց տուող զինուորականներին և զօրքերին. ինչպէս երևում է, շատերը արտաքրված և շատերն էլ իրանց աստիճանից զրկված և հեռացրած են: Կառավարչական կուսակցութիւնը իր ձեռքում զէթ ներկայումս մեծ ոյժ ունի. նա ցոյց է տալիս, որ կամենում է անկախ գործել: Թէ որքան այդ կը յաջովի Բոլզարական կառավարութեանը և ազգային ժողովին,—այդ կերպով մի քանի օրից յետոյ: Այնքանը որոշ է, որ Ռուսաստանը դրական կերպով յայտնում է, որ այն, ինչ որ իր փորձաքննարկն հակառակ է, իրան անընդունելի է: Բոլզարական կառավարութիւնն էլ այժմ դնում է այն ճանապարհով, որ ինքն է զծել:

Գործերի ընթացքը մի ուղղութիւն է ստացել և չէ կարելի չը նկատել, որ օտար պետութիւնների քաղաքականութիւնը իր մեծ ազդեցութիւնն ունի: Բոլզարայից եկած շատ տեղեկութիւններից երևում է, որ Անգլիան այնտեղ ջերմ կերպով գործում է: Տիսասի ճառը արդէն պարզեց Աւստրո-Ունգարիայի քաղաքականութիւնը. լօրը Չեքիլը իր նշանաւոր ճառը ասելուց յետոյ մինչև իսկ ծպտեալ կերպով Վիեննա եկաւ, և պէտք է խոստովանել, որ այդ ճանապարհորդութիւնը ոչ թէ առողջապահական է, այլ քաղաքական է, և եթէ քաղաքական է, ուրեմն տառնց ազդեցութեան չէ եղել... Եւ ահա այդպիսի հանգամանքներում է, որ կազմակերպեցաւ ազգային մեծ ժողովը 420 կառավարչական անդամներով, այդպիսի հանգամանքներով է շրջապատված այդ մեծ ժողովը, որը պէտք է նոր ընտրութիւն անի 85 թակահին սեպտեմբերի 6-ի և 86 թակահին օգոստոսի 10-ի յեղափոխութիւններից յետոյ: Ո՞վ կը լինի նոր իշխանը, ահա փափուկ և զլուաւոր հարցը: Ռուսաստանը իր թիկնածուն ունի, թիկնածուն էր Վերմանիան, թիկնածուների հարցի մէջ խառնվում է և Աւստրիան և Անգլիան. թիկնածուների հարցի մէջ մասնակցում է և Թիւրքիան. իր թիկնածուն ունի և Բոլզարիան ու ազգային ժողովը: Թէ ինչ համաձայնութիւն կարող է կայանալ թիկնածուի ընտրութեան հարցում այդ բոլոր կողմերի մէջ,—այդ մասին խօսելը հարկաւոր չէր համարում, այդ պարզ է նոյն իսկ բոլզարական անցքերի բոլոր պատմութիւնների հոլութիւնից: Ուրեմն ում կընտրի ազգային մեծ ժողովը:

**ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ**

Արդարեւ, 27 սեպտեմբերի Սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի սաստիկ ձիւս եկաւ Արդարեւում և նրա շրջակայքում: Արդարեւից ոչ հեռու գտնվող Կատուկ անունով սարի վրա այն աստիճան ցրտեց, որ այդտեղ հովիւները 5 հողի ստաւեցան: Թէ ինչ մեծ վնաս է ընտրում տարվայ այս եղանակին տեղացած ձիւնը, դա արդէն յայտնի կը լինի ամեն մի ամբողուն, որ իր կենսքում քիչ թէ շատ յարաբերութիւն է ունեցել երկրագործ դասակարգի հետ: Մրգերը դեռ ևս ծաւերի վրա են, ցորենը կալում,—այժմ այդ բոլորն էլ ձիւնի տակ մնալով, խեղճ երկրագործը կատարեալ յուսահատութեան մէջ է ընկել: Ձիւնի գալը տեղեց մօտ 28 ժամ, որից յետոյ արեգակը կը զլիչ ճառագայթները սկսեցին իրանց գոյծողութիւնը. և այս իսկ պատճառով գետերը բարձրացան, դուրս եկան իրանց արեգից, ճանապարհները անանցնելի դարձան և հեռանալն այն եղաւ, որ երթեկութիւնը Արդարեւի նահանգում առժամանակ ընդհատվեցաւ:

Գալով Արդարեւ քաղաքի մասին խօսելու, պէտք է ասել որ այստեղի հայերը մեծ թիւով չեն: Տեղիս պարսիկների հետ հայերը թէև թշնամական յարաբերութիւններ չունեն, բայց և շատ բարեկամական չեն այդ փոխադարձ յարաբերութիւնները: Այսօր, օրինակ, Արդարեւ ներկայանում է մեզ իր ամբողջ Ֆանատիկութեամբ, այսօր «մուսուսում» է, այսինքն իմամների նահատակութեան օրը և այլ է պատճառը որ փողոցներում, սկսած դառամեալ ձերուսուց մինչև մահուակ, սրբեր ձեռքն կտրատում են իրանց ճակատները: Իմամների այս նահատակութեան օրը մահամտականների ատելութիւնը դէպի այլադաւանները, որոնց թիւում և դէպի հայերը, իր գազախնակեան է հասնում: Բայց այսօր դեռ ոչ մէկ կռիւ տեղի չէ ունեցել. եթէ օրը հանդիստ անցաւ, նշանակում է որ այլադաւաններս կարող ենք գոյութիւն ունենալ մինչև եկող «մուսուսումը»:

Այսից որ հայերը այստեղ բազմաթիւ չեն, բայց որքան փոքրաթիւ էլ լինէինք, մենք մինչև այժմ դպրոց ունէինք: Իսկ այս տարի մեր դպրոցը դեռ ևս չէ բացվել: Գալորցը Արդարեւի հայ հասարակութեան համար օրվայ ինչպիսի դարձել: Բայց արդեք ուսանալների փակված դպրոցների նորից բացվելը ազդեցութիւն չը պիտի ունենայ և մեր քաղաքի դպրոցական գործերի վրա:

Ա. Մ.

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ**

—Բոլզարական կառավարութիւնը մի յայտադրել է ուղում տալ այն բանի մասին, որ ուսաց հիւպատոսարանի վրա գործած յարձակումը բոլորովին մասնաւոր բնաւորութիւն ունի: —Պօլսից հաղորդում են, որ Սուլթանը մի հեռագրով ցուակցութիւն է յայտնել, որ տկարութեան պատճառով անկարող եղաւ էլիւրուրդի դուքանի պատշաճաւոր ընդունելութիւն անել: —Սպանիայի նոր միւնիստրութիւնը իր առաջին խորհրդում վճռեց վերջնեղ պաշարման դրութիւնը, և որքան կարելի է շուտով օրինադիժ կազմել զօրքի մէջ փոփոխութիւններ անելու համար: Այդ օրինադիժ ընտրութիւնը կը լինի նոյեմբերին: Ներքին գործերի միւնիստրը մի չըվաբերականով յայտնեց, որ սրանից յետոյ միասնաբանութեան դէմ եղած յարձակումները կարգելվեն: —Հոկտեմբերի 2-ին բացվեցաւ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի նստաշրջանը: —Չիկագայից հաղորդում են որ սեպտեմբերի 28-ին տեղի ունեցան բանաւորների մեծ գործադուլներ: —Սերբիայի միւնիստրները հաւաքվում են արդէն Նիշ, ներկայ լինելու ազգային սկուալիւնայի բացմանը: —Անգլիայում պահետի զօրքի թիւը այժմ հասնում է 75 հազարի. անգլիական կառավարութիւնը վճռեց շատացնել հեծելազօրքի թիւը: —Աւստրիայում արդէն վճռվեցաւ զօրքի մէջ մտցել մազաղիւնային կոշիկած հրացանները: Մազաղիւնային հրացանները սկսել են գործածել և Գերմանիայում: —Չերսօզորիայում փոփոխութիւն են մտացում զէնքերի և զօրքի զինաւորվելու կարգերի և ձևերի մէջ: —Բերում ենք հետեւեալ թիւերը պետութիւնների ունեցած միակեր նաւերի թիւի մասին: Ռուսաստանը ունի այժմ 175 միակեր նաւ. Անգլիան 158 միակեր նաւ. Ֆրանսիան 123, Իտալիան 92, Գերմանիան 62, Աւստրիան 34, Յունաստանը 26, Հոլանդիան 23, Գանիան 22, Չինաստանը 20, Թիւրքիան 19, Շվեդիան 15, Սպանիան 12, Բրազիլիան 11, Չիլի 9, Նորվեգիան 8, Եսպանիան 7, Արգենտինեան հանրապետութիւնը 6, Պորտուգալիան 5: —Բոլզարայից գրում են դերմանական լրագիրներին, որ հոկտեմբերի 8-ին կայացաւ միտինգը Չախար Սոսեանովի առաջնորդութեամբ, որտեղ վճռվեցաւ խնդրել հեռագրով իշխան Ալեքսանդրին ընդունել Բոլզարայի գահը, եթէ ազգային ժողովը նրան նորից կընտրի: —Սերբիայում լուրեր տարածվեցան, որ Միլան թագաւորի անձի դէմ փորձեր եղան: —Աւստրո-Ունգարիայից հեռագրում են, որ

Սեպտեմբերի 10 իստիւն սաստկացաւ. պատճառը զլուաւորապէս վատ ջուրն է, որը ժողովուրդը խում է:

**ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ**

10 ՆՈՒՅՈՒՆ, 10 հոկտեմբերի: Մեծ պետութիւնները համաձայն են տարի Ռուսաստանին զեկավարողի դերը բոլզարական ճգնաժամը վերացնելու համար: ՎԻԵՆԱ, 10 հոկտեմբերի: Մեծ պետութիւնների ներկայացուցիչները կողմնակից Տիւրքիոյ, երբ ազգային մեծ ժողովը կը վերջացնի ընտրութիւնների ստուգումը, այսինքն երկու շաբաթից յետոյ: Այդպիսով իշխանի ընտրութիւնը կուշանայ: ԺՈՒՐԺԵՎՈՒ, 11 հոկտեմբերի: Հաւանական չէ, որ Բատոնեքերը իշխանը երկրորդ անգամ կընտրվի բոլզարական գահի վրա: Ասում են որ Աւստրիան մինչև անգամ կընդդիմադրի պրինցի անցնելուն աւստրիական հողի միջով: Մեծ ազգային ժողովը պէտք է բաւականապէս խնամակալութեան հաստատելով, միմիայն փոփոխելով նրա կազմակերպութիւնը. կարավիզով տեղը կը բանի կամ Բոթուլաով կամ Նաչիկէ: Ժողովը կը բացվի, երևի, 19-ին հոկտեմբերի: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի: «Русский Ин-Вестит» լրագիրը իր մի յօդուածում, որ նուիրված է անցեալ պատերազմի յիշատակին, Պետերբուրգում «Փառաց արձանի» բացման առիթով թիւում է զօրքերի քաջագործութիւնները և դժուարութիւնները, այլ և այն սէրը, որը տառում էր դէպի զօրքը նրա ՚ի Տէր հանգեալ առաջնորդը, և ուսու զինուորների այն սուրբ պարտաւորութիւնը, որով դրանք նոյնքան հաւատարիմ և անձուէր կերպով պիտի ծառայեն ինչնակալ Որդուն, ինչպէս ծառայում էին Նորա Օգոստապիա Միտինը: «Journal de St. Petersburg», ուշադրութեան է առնում «Վէյտերի գործակալութեան» հաղորդագրութիւնը, որ պետութիւնները համաձայն են տարի Ռուսաստանին զեկավարող դերը բոլզարական ճգնաժամին վերջ տալու համար, և կրկնում է, որ Ռուսաստանը առանձին իրաւունք ունի իր ձեռքով աղաւթած երկրի վրա, և մասնաինչ է անում, որ «Փառաց» արձանի այսօրվայ հանդիսաւոր բացումը մի անգամ ևս յիշեցնում է մեր զօրքի քաջութիւնը, նրա հերոսական քաջագործութիւնները, և դէպի դահն ու հայրենիքը ունեցած անսաման հաւատարմութիւնը: Ներանով պատմութեան մէջ մտցրած էջերը ոչ մի բան չէ կարող ոչնչացնել: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 հոկտեմբերի: Երէկ կայացաւ «Փառաց» արձանի օծումը, որ կանգնեցրած է ՚ի յիշատակ վերջին թիւրքաց պատերազմի յաղթութեան: Արձանը, որ կանգնեցրած է Տրոյցի մայր եկեղեցու մօտ, իրմայրովսկի պոլի անտանկած քաղաքամասում, ներկայացնում է վեց յարկանի մի սիւն, որից կախված են թիւրքաց 104 թիւղանոթներ: Արձանը պսակում է փառքի տեսքով: Հանդէսը սկսվելուց առաջ Տրոյցիււ մայր եկեղեցու մօտ շարքով կանգնեցին զվարդայի դիւերի մի քանի մասերը, զինուորական տաւանարանների իւնիկները և երեք խառն բառալիւններ, անցեալ պատերազմին մասնակցող զէրքեան սպայտեսները: Նոյցա կայսերական Մեծութիւնները, Թագաւոր կայսրը և Թագուհին կայսրուհին բարեհաճեցին դալ հանդիսին կէտրից առաջ: Թագաւորը բարեհաճեց պտտել զօրքերի մէջ, որոնք ուրախ «ուրաներով» պատասխանում էին Բարձրագոյն ողջոյնին: Չալից յետոյ պալատական հողերաւ կանուցիւնը մաղթանք կատարեց, որից յետոյ յաւիտենական յիշատակ մաղթվեցաւ Ալեքսանդր II կայսրին, Սէրգէյ Մազալիւիլաիսովիչին և բոլոր սպանված զինուորներին: Հանդէսը վերջանալուց յետոյ զօրքերի հանդիսաւոր դիւարքով անցնելու ժամանակ, զօրքերին առաջնորդում էին զինաւորները: Գուրկո, Բալեցկի, Շուրաւով, Բոսոյ, Պետրուչեւիկի, Ալլազով և իշխան Չուկալաձէ: Հանդիսից յետոյ հրաւէրը կար քաղաքի կողմից, իսկ երկրորդան պալատում հանդիսաւոր ճաչ կար Այսօր Ալեքսանդրեան թատրոնում ձրի ներկայացում է տրվում զէրքեան կապալէր ստորին զինաւորների համար: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 հոկտեմբերի: Երէկ, քաղաքի կողմից զէրքեան կապալէրներին հրապարկելու ժամանակ, Թագաւոր կայսրը պտտեց նրանց շարքերում և ապա, վերջնակով մի բաժակ օղի, կենաց տուալարից՝ «ձեր կենացը, կորիճներ», որին պատասխանեցին բարձրաձայն «ուրալուց»: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաւիչ առաջակից իրին Մեծութեան կենացը. իսկայն «ուրան» միացաւ ազգային հիմնի ձայների հետ: Չորսնոցների բակից, որտեղ հրաւէրը կար, Նոյցա Մեծութիւնները և Բարձրութիւնները զիմեցին շքեղազարդ թիւղանոթաձիւնների մասնէժը, ուր օֆիցերների համար նախաձայնի էր պատրաստված: Այստեղ Թագաւորը խմելով օֆիցերների կենացը, առաջարկեց հետեւալ տօսը, «Պարոններ, ձեր կենացը: Յանկանում եմ ձեզ յաջողութիւն և կապտարեալ առողջութիւն սպաղալուս: Ծնորակալ եմ այն նեղութիւնների համար, որ դուք տարաք պատերազմի ժամանակ: Ասում եմ ես նրա կողմից, որը արդէն չը կայ մեջ. կրկին նորահալա եմ, պարոններ: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաւիչը Թագաւորի կենացն առաջարկեց: Կենացին

պատմական եղանակով բարձրաձայն «ուրան» և ազգային հիմքով...

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՄԱ

Table with 2 columns: Item description and price. Includes items like flour, oil, and various goods.

Table with 2 columns: Item description and price. Includes items like flour, oil, and various goods.

Վ. օլժակո-կամակի բանկի ակցիաները 578 > 50 >
Ռուսաց երկաթուղիների գլխավ. ընկ. 263 > 50 >

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ԱՍՏՐԱԽԱՆ. Ս. Ուղարկեցէք ձեր «Երեք ընկերներ» վերնագրով վեպի շարունակությունը:

Խմբագիր-հրատարակող Գ.ԲԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մի վարձովի, որ աւարտել է թիֆլիսի Գայեանեան դպրոցը, ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒԻ ՄԱՍՆԱԿՈՐ ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԿ: ՀԱՄԱՁԱՅՆ Է ՆՈՑՆՊԵՍ ՄՆԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՊԵՆ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԵՏ: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը: 1-5

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՃԻՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՅՏՈՒՄԻՆԻՆ ՍՏԱՅԱՉ ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵԼ

ՄԻՇՈՒՆԱՅ



Մեծ եի ֆոֆր ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժէ 60 կ.:

Բակի գինը 1 ր. 20 կ. գուտապէս մեքենան առանձին. 1/2 դորակ 65 կ.
Ս մ բ ա կ ա յ ի ն օ ծ ու ն, Ռիս Գուտամանի, ձիերի սմբակները ամեն օր օժելու համար, պահպանում է սմբակը ճարտար և նախընտրելի միջոցին թուրք-նարայ: Դորակի գինը 1 րուբլի:

ԹՈՅՏՈՒՄԻՆԻՆ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱԲԱՂԱՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԱՆ

Էլեկտր-Melange. Մագերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափանցիկութիւնը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուստերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:



Կոտորեալ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուստերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Բազում—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երևանի, շիֆերնի և ձեռքերին քնքշուածիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարի մի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ:

Իսպական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անարթութիւնների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.
Ֆինին-գլիցերինեան սպումը պերուական բազմամից, մազերը սնուցնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:
Ձեռքերի սպումը: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական գործով, մի «Նրեշտակ» և հնարող ստորագրություն «Bertha Ries».

Արժուանքը իրանց մէջ որ և է մասնակար ներթեր:
ԱՐՏՈՆՈՒԹԻՆ ՍՏԱՅԱՉ ՊՈՄՄԱԻ
Իսպական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անարթութիւնների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.
Ֆինին-գլիցերինեան սպումը պերուական բազմամից, մազերը սնուցնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:
Ձեռքերի սպումը: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական գործով, մի «Նրեշտակ» և հնարող ստորագրություն «Bertha Ries».

Մի ԵՐԻՏԱՍԱՐԿ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը, ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՍՈՒՑԻՒ ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԿ Հայոց դպրոցներում: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 1-3

Ներսիսեան դպրանոցը աւարտած Մի ԵՐԻՏԱՍԱՐԿ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՍՈՒՑԻՒ ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԿ Հայոց ուսումնարաններում: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը: 1-3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՒ ՆԱԿԱՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ (ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ: Հինգշաբթի, 16 հոկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգնաւ. MENDOSA (ՄԵՆՏՈՍԱ) դէպի Կ. Պօլիս և Ջիւնիսի և յարակցելով Եսֆա, Պորտ-Սայիդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգնաւերի հետ: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒՄ պ. պ. ԲՈՒՐԿԱՐԻՆԻ և ԸՆԿ. Իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՂՈՒԹԵԱՆ ՀԵՂՈՒԹԵԱՆՑԻՆ: 3-3

ՅՈՐԵՆԻ ԵՒ ԿԵՐՈՍԻՆԻ ՍԿԼԱԴ

Պատու ունենը յայտնելու, որ մենք բացած ենք Փօթի քաղաքում, Ռիօն գետի վրա, ցորենի սկզբը, կերտների բնագրի վրա, և տակաւներ ու ծես տեսնելու և պատրաստող գործարան: Գործի սկզբը, որ նոր ու ամուր շինութիւն է երկաթեայ ծածկոցով, բաղկացած է չորս բաժանմունքից, և կարող է գտնել իր մէջ հարիւր վազօն հացահատիկ: Յիշեալ սկզբը միացած է մի կողմից կողմնաւան երկաթուղու, և միւս կողմից Սե ծովի նոր բուխտայի հետ, և ունի այնպիսի յարմարութիւններ, որոնք միջոց են տալիս ամենայն տեսակ ապրանքներ ստանալ և յանձնել նաւերին, ըստ որում ծախան էլ ապրանքը վերափոխելու վրա է ծան է նստում:
Մեր սկզբը կընդունէ իր մէջ ժամանակաւոր պահելու համար ցորենի և այլ հացահատիկներ ամեն ցանկացողից, վերցնելով մինչև 15 օրվայ համար՝ իրութիւն մէկ կօպէկ, կամ վազօնին 6 րուբլ: Մեր սկզբը յանձն է առնում ստանալ ցանկացողից ցորենի և այլ հացահատիկներ ու վաճառել նրա համար, վերցնելով սկզբի օգտին փութիւն մէկ կօպէկ, կամ վազօնին 6 րուբլի, ըստ որում ապրանքը սկզբում մինչև 10 օր պահելու համար ոչինչ վճար չէ պահանջուում:
Ցանկացողները վաճառել մեկ իրանց ցորենը կամ ուրիշ հացահատիկներ, պիտի ուղարկեն մեզ իրանց ապրանքի նմուշը (օրրազիկ), որից յետոյ ապրանքը կը գնահատուի երկու կողմի համաձայնութեամբ:
Մեր նախագործարանը ոչինչ արգելք չի լինի ցորենի սկզբին որովհետև գետեղված է առանձին շինութեան մէջ և դռնվում է բաւական հեռու ցորենի սկզբից:
Մեր կերտին և տակաւներ ու ծեստանկաներ պատրաստող գործարանը նոյնպէս ունի ամեն տեսակ յարմարութիւններ: Նա պատրաստում է էջան գնով տակաւներ ու ծեստանկաներ, և ընդունում է նորոգելու համար հին տակաւներ ու ծեստանկաներ:
Մենք յանձն ենք առնում կերտները ընդունել ու ամէկ շատ չափաւոր գնով:
Մեր տակաւագործարանը կարող է պատրաստել մեծ քանակութեամբ տակաւներ, իսկ ծեստանկաներ շինող մեքենաները առ այժմ կը պատրաստեն օրեկան 1,200 ծեստանկա, իսկ փոքր ծաւանակից յետ առելի մեծ քանակութեամբ:
Յոյս ունենը, որ մենք յանձնարարութիւններ կստանանք մեր երկրի վաճառականներից. մենք աշխատելու ենք յարաբերութիւն սկսել արտասահմանեան վաճառատների հետ և բաւականացնել մեր երկրացի վաճառականներին:
Մեզ առանձին պայմաններ առաջարկել կամեցողներին խնդրում ենք նամակով դիմել մեզ հետեւալ հասցեով.

Поти, Очагаву и Тараеву 4-10

Այս տարուայ օգոստոսի 1-ից բացուեցաւ Թիֆլիսում (Միջալեւան կամուրջի վրա №2 և 30)

ՆՈՐ-ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑ

Նոր-գրավաճառանոցում վաճառվում են ամեն լեզուներով դասական և ընթերցանելի, անկազմ և կազմած գրքեր (հասարակ կազմ 15 կ. իսկ կաշէ կազմ 30 կ.):
Դասական պիտոյքներ՝ տետրեր, քարտեզներ, մատիտներ, գրիչներ, գրակոթիկ, թանաքամաններ և այլն: Տետրերը և քարտեզները լինում են տողած և անտող: Պատուիրողները մեծութեան և փոքրութեան հետ պէտք է որոշեն գծի տեսակները:
Գրավաճառանոցը ընդունում է ամենայն տեսակ գրքերի կամիստիկ վաճառելու համար: Ամեն տեսակ լրագրի և յայտարարութիւնների ստորագրութիւն (թէ սեղական և թէ Ռուսաստանի), տպագրական և կազմարարական յանձնարարութիւններ և զանազան տեղեկութիւններ գրքերի և դասական պիտոյքների վերաբերութեամբ:
Պատուիրողներ կատարվում են շուտ և ամենայն ճշգրտութեամբ: Թիֆլիսում տպած գրքերի և դասական պիտոյքների գուժարով գնողներին գիշուան է լինում:
Հանապարհածախք գնողների վրա է:
Պատասխանի համար պէտք է 7 կօպէկանոց փոստի մարկա ուղարկել:
Օտար քաղաքներից գիմում են. Тифлисть, «Новая Книжная Торговля», на Михайловскомъ мосту, №№ 29 и 30.

8-15

Advertisement for 'ՉՕԿՈԼԵԻ' (Chocolates) with price 34-50 k.

Այս տեսան և վաճառվում են կենսորոշական գրավաճառանոցում Ս. Մանդրեանի Ռուսաց լեզուի դասագիրքը առաջին և երկրորդ տարուայ համար և այլ դասագիրքը գործածելու համար առաջնորդութիւնը «Ռուսաց լեզուի դասատուութեան եղանակ» վերնագրով: Առաջինը արժէ 25 կօպ. երկրորդը—60 կօպէկ: 6-6